ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2020-2022թթ. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ (հունվար-հուլիս)





2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 1 տրիլիոն 88.1 մլրդ դրամ, ինչը 496.2 մլրդ դրամով կամ 83.8%-ով ավել է 2021թ. և 656.5 մլրդ դրամով կամ 152.1%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից մեծ է 233 մլրդ դրամով կամ 27.2%-ով: 2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 590 մլրդ դրամ, ինչը 247.1 մլրդ դրամով կամ 72.1%-ով ավել է 2021թ. և 289.3 մլրդ դրամով կամ 96.2%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 177.6 մլրդ դրամով կամ 43.1%-ով: 2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 498.1 մլրդ դրամ, ինչը 249.1 մլրդ դրամով կամ 100%-ով ավել է 2021թ. և 367.2 մլրդ դրամով կամ 280.5%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 55.4 մլրդ դրամով կամ 12.5%-ով:

2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացվել է 2 մլրդ 437.8 մլն դոլար, ինչը 1 մլրդ 291.3 մլն դոլարով կամ 112.6%-ով ավել է 2021թ. և 1 մլրդ 544.5 մլն դոլարով կամ 172.9%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 567.7 մլն դրամով կամ 30.4%-ով: 2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց կողմից արտերկիր է փոխանցվել 1 մլրդ 323.5 մլն դոլար, ինչը 660.6 մլն դոլարով կամ 99.7%-ով ավել է 2021թ. և 701.1 մլն դոլարով կամ 112.6%- ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 432.4 մլն դոլարով կամ 48.5%-ով: 2022թ. հունվար-հուլիսին ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և արտերկիր փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 1 մլրդ 114.3 մլն դոլար, ինչը 630.7 մլն դոլարով կամ 130.4%-ով ավել է 2021թ. և 843.4 մլն դոլարով կամ 311.3%-ով ավել է 2020թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներից, իսկ 2022թ. հունվար-հունիսի ցուցանիշից ավել է 135.3 մլն դոլարով կամ 13.8%-ով:

*** Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի արտաքին հատվածի վիճակագրության հրապարակումները՝ ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից ստացված և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր իրականացված փոխանցումների վերաբերյալ**